

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
 Ե. ԹՈՐՈՍՅԱՆ
 ՆԱՄԱԿ ԿՍՄ ՈՐ ԵՒ Ե ԳԳՈՒԹԻՒՆ
 ՊԵՏՐ Ե ՈՒՂՂԱՆ. ԱՌ
 ՏՃՕՐԻՑ. ԱՐՇԱՆՈՅՍ ԼՐԱԳՐԻ
 ԳԱՂԻՐԷ (փոքր Աէսքսոն)

ԱՐՁԱՆԱԳՐ

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԵՏՈՍԻ ՉԱՄԱՐ	
Տարեկան, ողջ դահլիճ.	60
Վեցամսեայ	35
ՕՏԱՐ ԵՐԿԻՆԵՐ	
Տարեկան Ձմարնի	20
Վեցամսեայ	12

E. TOROSSIAN
 Direc.-propr. du journal arménien
ARCHALOUICE
 LE CAIRE (Égypte)
 Rostojestants

ԼՐԱԳՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔԵԱԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՔԱՄԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 ԵՒ ԹՂՔԱՍԱՐԻ ԾԱԽՔԸ
 ԽՈՐԱԳՐՈՒՅԵԱՆ ՎՐԱՅ :
 ԽՈՐԱԳՐՈՒՅԵԱՆ ՈՒՂՂՈՒՄ
 ԳՐԱՔԻՆԻՔ ԵՍ ԿՆՍ ՕՐՈՒՐ :
 ԱԶԳԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
 Կանխիկ վճարելի է

ՎԱՄՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՐԲԱՆՆԱՄ ԸՆԿ.

Թեև քիչ մը ուշ բայց վերջապես Եգիպտոս ալ կունենայ իր Որբաննամը, և տարբեր կերպ չէր կրնար ըլլալ :

Հայ տարրը, այսօր քիչ շատ կարեօր տեղ մը կը գրաւէ նեղոսի եզերքներուն վրայսփռուած այլազան քաղթականութեանց մէջ : Առևտրական, սեղանաւորական և արհեստական ասպարէզներու վրայ հայ անհասներ ազգային միջավայր մը կը կազմեն մանաւանդ երեք չորս տարիներէ ի վեր : Մենք հոս ունենք երբեմն մեծանուն նախարարներ, բարձրաստիճան պաշտօնատարներ և կարեօր վաճառականներ : Այժմ եկած են հոս հաստատուող անխուսափելի մանրամասնութիւն, անխիղճ վաշխաւորներ, անսիրտ սեղանաւորը և լայն սիրտ խառնուածիկ : Բժիշկ, գրագէտ, ուսուցիչ, գործարանատէր, ատամնարոյժ, կոշիկակար, դերձակ, դեղագործ, հայագործ և անգործ հայեր ամեն մէկ քայլիդ կը հանդիպին :

Հայերը հոս ունին եկեղեցի, դպրոց սրճարան, լսարան, լրագիր — քիչ մնաց Առաջնորդ ալ պիտի ունենային. — ծխաւաճառութեան մէջ հայերը լաւագոյն տեղը կը բռնեն, Խան-Խայիլէն Խամայիլիէ հայ անուններ կը կարգանք կրպակներու վրայ : Պօլսոյ և Իզմիրի վաճառատուններէն շատեր իրենց մասնաճիւղը բացած են հոս, մնայուն թատերական խումբ ունինք, Քաղաքական ժողով անգամ կայ. գեղարուեստով ապրող հայեր չեն պակսիր, մինչև իսկ հայ պրոսպրիներ ունինք որոնց դրան առջև գրկաբաց քեզ կ'ընդունին հայուհիներ : սրբաւար հայ բարապան մը ազգային արժանապատուութիւնը կը պտտցնէ փողոցէ փողոց : դպրոցի կռիւ, սէրտէրի կռիւ, էրիկ կնկան կռիւ ամեն օր կ'իմանանք :

Վերջապէս հայ կեանք մը կայ հոս, որ ամեն մէկ բայիդ կը տեսնես, կ'զգաս : Արդ՝ Որբաննամի մը կազմութիւնը չի զարմացներ զմեզ և որովհետև այդ գործին initiativeը ոչ բաշաներ յղացած են և ոչ ալ պէյեր, ազահովաբար և վստահութեամբ կրնանք սպասել որ յարատև և արդիւնաւոր պիտի ըլլայ ան :

Արդէն գործը ինքնին յանձնարարելի է և ես պէտքը չեմ զգար «Արշարոյս» ընթերցողներու ազնիւ զգացումներուն կողմէն :

մը ընել քաջաբերելու համար այդ ընկերութեան առաջին ձեռնարկները :

Գործը ինքնին այնքան սուրբ է որ պէտք չունի ինծի պէս հեթանոս գրչի մը խրախոյսին :

Ես չեմ կրնար երեւակայել հայ մը որ չզգաժուի այն տխուր և սարսեցուցիչ լուրերէն որ մեր հայրենի երկրէն մեզ կուգան : Ամբողջ հայ թերթեր անոնց արձագանքով կը լեցնեն իրենց սիւնակները : Նոյնպէս ես չեմ կրնար երեւակայել հայ մը որ իր մէջը չզգայ խղճի ձայն մը հրապիրող գէպ ի գուժ ի նպաստ հաղարաւոր խեղճ որբիկներու որոնց յոյսը կը կազմենք մենք հայերս, ուր որ ալ գտնուինք :

Նոյն իսկ կառավարութիւնը կարեկցութիւն մը ունի անոնց համար որով ամեն դիւրութիւն և արտօնութիւն կուտայ ազգին լայն և ազատ կերպով իր խնամքները և պաշտպանութիւնը անոնց հասցնելու :

Ասկէ աւելի դրական ապացոյց մը չէի կրնար մէջ տեղ բերել յանձնարարելու համար «Վասպուրականի Որբաննամ» Ընկերութիւնը, եգիպտաբնակ ամեն կարգի հայերուն :

Ազգային անտարբերութիւնը որ երբեմն Եգիպտոսի հայերուն մեծաշնորհալ մէկ յատկութիւնն էր այլ ևս գոյութեան իրաւունք չունի :

Եւ վերջապէս չպահանջուիր որ ամեն հայ մեծ մեծ զոհողութիւններ ընէ որբերը հողալու համար, ընդհակառակը խնդրուածը ամեն մէկուն լուծան է, մէկ երկու դահլիւկանք :

Պիտի գտնուի՞ մարդ որ մերժէ այսքան համեստ նպաստ մը : Ես այդքան յոռետես չեմ ուզեր ըլլալ :

Ամեն վստահութիւն ներշնչող այս ընկերութիւնը որ արդէն այսքան սուղ ժամանակի մէջ և այնքան նեղ միջոցներով կրցած է իր ծրագրին մէկ փոքրիկ մասը իրագործել. երկու որբեր ինամել տալով իր հաջոյն վարագայ վանքին մէջ, իրաւունք ունի մեծ ակնկալութիւններ ունենալու եգիպտաբնակ հայրենի որոնք անշուշտ, ամեն տեղի հայերուն պէս, սիրտ մը ունին կարեկից և մարդասէլ զգացումներ :

Պօլսոյ և գաւառներու մէջ — ինչպէս դուք ալ անշուշտ կարգացած էք — ուժ տաս տարու ազաքներ տեսանք որոնք իրենց

քանի մը զրուշ պարունակող գանձանակները խորտակեցին մէջի դրամը Պատրիարքարան տանելու համար :

— Սրբազան, ասիկայ Հայաստանի մեր որբ եղբայրներուն զրկեցէք կ'ըսէին Պատրիարքին :

Մարդուս աչքէն արցունք կուգայ երբ ասանկ մանկական բայց վսեմ անձնուիրոն թիւններու օրինակներ կը տեսնայ :

Ի՞նչ, եգիպտոսի մէջ, այդ տղոց չափ ալ չ'պիտի՞ զգաժուինք, ատոնց ըրա՞ծն ալ չ'պիտի ընենք :

Չեմ գիտեր ինչո՞ւ նախազգացումը ինձ կ'ըսէ թէ այս անգամ տարբեր երեւոյթ մը յառաջ պիտի գայ մեր գաղութին մէջ : Պիտի տեսնէք թէ ամեն դասակարգի հայեր պիտի հետաքրքրուին Որբաննամի ընթացքին և առատօրէն պիտի օժանդակեն անոր մտտուկին :

Ամիսը երկու, հինգ կամ տաս զրուշով հայր, մայր, պաշտպան չունեցող այդ անուշիկ որբերէն քանի մը հատը ցուրտէն, անօթութեանէն ազատել, կեանք տալ անոնց, քիչիկ մըն ալ կրթութիւն. բայց ասիկայ երանութիւն մըն է որմէ մարդս ինքզինքը զրկելու համար, անոր քաղցրութիւնը և վստահութիւնը չ'ըմբռնելու համար, քարէ ծնած ըլլալու է :

Եւ կրնաք վստահ ըլլալ որ «Վասպուրականի Որբաննամ» ընկերութեանս զեկը պատուաւոր, լքանիմաց և ազգասէր անձնաւորութիւններու ձեռքը կը գտնուի, ուղուածէն աւելի արդիւնաւոր կերպով պիտի մատակարարէ այն նպաստները որ պիտի յանձնուին ընկերութեան :

Հաւատքս մեծ է այդ ընկերութեան ապագային վրայ, և տարակոյս չունիմ որ ամեն ճշմարիտ ազգասէրներ ինծի պէս կը մտածեն այս պահուս :

Ա.

ՎՐԻՊԱԿ

Մեր նախորդ թուոյն օրը՝ փոխանակ ՉՈՐԵՔԵԱԹԻ, անուշադրութեան հետեանոք ՇԱԲԱԹ նշանակուած էր, զոր ուղղել արժան կը դատենք :

ԵՐԿՐԱՇԱՐԺԵՆ ՎԵՐՋ

Երկրաշարժի ցնցումները որ շատերուն միտքը ահ ու դողով պաշարեց, այլ եւ այլ շրջանակներու մէջ ալ զուարճալիքի նիւթ մատակարարած եւ երկար բարակ խորհրդածութեանց առարկայ եղած է :

Ահաւաստիկ նմոյշ մը, եթէ կը հաճիք :
Առասկզմութիւնը տեղի կունենայ սրճարանի մը անկիւնը :

(Առասկիցներէն մին կուշտ ու կուռ խնդալով).

—Այս ի՞նչ հակասութիւն, երբեմն մեր զըպրօցին վարժապետները կ'ըսէին թէ՛ երկրաշարժը այն տեղերը միայն կը պատահի, երբ քաղաքին մօտերը հրաբխային լեռներ կը գտնուին, ու երբ այդ լեռներուն մէջ ամբարուած լավաները բռնկելով լեռներուն գագաթները կը պատեն ու դուրս կը պոսթկան : Եւ ի՞նչ զարմանալի բան, մեզի իբր օրինակ կը ներկայացնէին Վեսուվ լեռը, որ հրաբխային է եւ նաքովի մօտերը գտնուած ըլլալուն համար, այլ եւ այլ ժամանակներուն մէջ սոսկալի միասնեւ հասուցած է այդ գեղեցկաչէն քաղաքին :

—Իրաւունք ունիք, եւ ես կը հաւատամ թէ՛ դուք ալ Եգիպտոս դաղթելու որոշումը ոտուած ատեննիդ անպատճառ ուշադրութեան առած ըլլալու էք թէ՛ Եգիպտոս ասփարակ երկիր մը ըլլալով երկրաշարժի ցնցումներէն ազատ կը մնայ եւ դուք ալ անպատճառ ա՛լ տեղերէն չ'շարժելու չափ . . . կը օտարակցաբար, այնպէս չէ՞ բայց պէտք էր գիտնալ միանգամայն թէ՛ երկրիս ամեն կողմերը հանքեր կը պարունակին եւ այդ պատճառաւ շարժի ցնցումներէն զերծ չեն կրնար մնալ : Հետեւաբար ձեր վարժապետները . . .

—Ներքեջ՛ք, հիմակ ա՛լ տարակոյս չունիմ որ մեր վարժապետներէն շատերը երկար տարիներ տղաքներու հետ գտնուելով եւ անոնց հետ միայն զբաղելով, տղայական բնաւորութիւնը իւրացուցած են. անկէ զատ դատողութեան տեսակէտով ալ տղայէ մը տարբերութիւն չեն ունենար շատ անգամ. շատ անձուկ եւ սահմանափակ է իրենց մտածման եղանակը. իսկ իրենց կարողութիւնը գիտութեան տեսակէտով — զոր օրինակ աշխարհագրութիւնը ըսենք — Մարգարեանի համառօտ գրքէն անդին չ'անցնիր. ինչ որ կը հաստատէ թէ թէ՛ օր օրի նոր բան մը սորվելու կամ յառաջդիմական մտածում մը ունենալու հետամուտ չեն եւ ուր որ են միշտ հոն կը մնան . . . ու պիտի մնան ալ :

—Եղբայ՛ր, ինչո՞ւ վարժապետները կը մեղադրէք, թէ եւ մեր նիւթէն քիչ մը շեղած կ'ըլլանք, սակայն կ'արժէ որ քիչ մ'ալ ասոր վրայ մեր միտքը յոգնեցնենք : Մեր ազգին վարժապետները թէ եւ մեծագոյն մասամբ անարժան հացկատակներ, հաճոյակատար ստրուկներ են, միւս կողմէ սակայն մեր հոգաբարձուներն ալ սովորի բռնաւորներ են յաճախ :

Պէտք է ընդունիլ թէ շատ մը արժանաւոր ուսուցիչներ ալ կը գտնուին մեր մէջ, որոնք իրենց ապերախտ ասպարէզին կտաւած մնացած են, իրենց տեսութիւնները սահմանափակ չեն : Ընդարձակ եւ յառաջդիմական ծրագիրներ կը յօրինեն. իսկ երբ իրենց ծրագիրներուն գործադրութիւնը կը հասնի դրամին զրանը առջեւ, հոն ալ եւս կանգ կ'առնէ, կ'ոչնչանայ . . . :

Յայտնի է թէ վարժապետ դասակարգը ընդհանրապէս աղքատութեան որդիներն են. մեր հարուստի զուակները չեն ըմբռնած վարժապետական ասպարէզին նուիրականութիւնը եւ պէտք ալ չեն զգար անոր վրայ մտածելու. այդ պատճառաւ վարժապետութիւնը մնացած է աղքատներուն բաժինը, եւ եթէ քիչ մ'ալ մտքով աղքատ ըլլան, ա՛լ կրնաք երեւակայել թէ՛ այդ պաշտօնը մինչեւ ո՛ւր կը խոնարհի . . . : Անկացի մը ըսած է թէ՛ «Եթէ կուզէք ազգի մը յառաջդիմութեան քանակը գիտնալ, այդ ազգին վարժապետներուն եւ վարժարաններուն նայեցէք » :

Գալով վարժապետներուն եղած նիւթական վարձատրութեան, շատ խեղճ բաներ են, օրինակը առջեւնիս է ահաւաստիկ ի՞նչ պէտք է վճարուի

Տնօրէնի մը կամ ուսուցչի մը, որ կարենայ պէտք եղած կերպով ապրիլ իր ընտանիքով եւ զուակներով Եգիպտոսի նման քաղաքի մը մէջ . . . : Գնացէ՛ք, հարցուցէ՛ք մեր Տնօրէնին եւ ուսուցիչներուն թէ՛ ամսական ի՞նչ կ'առնեն, այն ատեն դիւրին պիտի ըլլայ դուշակել թէ՛ անոնց պատրաստած կոկիկ ծրագիրները քանի՛ քանի անգամներ նեղօտ չալկելով տարած Միջերկրական ծովը թափած է . . . :

—Հա՛, վարժարանի խօսքը ըրիք, միտքս բան մը եկաւ, որ դարձեալ մեր սկսած նիւթին — երկրաշարժին — հետ վերաբերութիւն ունի եւ երկրաշարժին չափ ալ հետաքրքրաշարժ է. տեսնեմ դուք ի՞նչպէս կը գտնէք :

Ի՛նչ մը առաջ բարեկամ մը գիտողութիւն կ'ընէր թէ՛ երկրաշարժին պատճառը ո՛չ հրաբուխն է, ո՛չ լեռը, ո՛չ լաւան եւ ո՛չ ալ նեղօտէն ոռոգուած խճուանները, ինչպէս ոմանք կ'ենթադրեն, այլ, գիտէ՞ք կ'ըսէր, շատոնց է որ Գահիրէի ազգային վարժարանին բարեկարգութիւնը ձեռք բերելու համար, ազգային վարչութեան բոլոր ճիւղերուն ալ հաւաքական թէ՛ անհատական դիմումներ եղան որ պէտք եղածն ընեն, կամ զարժանն ստօրինեն, որը կուզես ըսէ . . . :

Ասոնք բոլորն ալ ականջները բուրջ խցցին ու անշարժ մնացին նաբուգործութեան արձանին պէս. հիմակ ալ ինդիրը նախախնամութիւնը ձեռք առած է եւ այդ . . . անշարժները շարժելու համար ելեր ամբողջ Եգիպտոսը կը շարժէ . . . : Այս կարծիքը ամենէն հաւանականը չէ՞ք գտնու, ի՞նչ կ'ըսէք :

—Այնչափ տարօրինակ չէ այդ, թէ եւ նախախնամութեան այդչափ անարգարութիւն յուսալ ներելի չէ. ինչո՞ւ միայն Գալստեան վարժարանը բարեկարգելու համար Գահիրէի հին թաղերն ալ քարուքանդ վիճակի մը վերածելու պատճառ դռնայ. չէ՞ք կարգացած որ նա Սողոմ Գոմորի պատճելու ատեն Ղովտին ընտանիքը անկէ հեռացուց :

—Եթէ այդպէս է, ինչո՞ւ ուրեմն Ադամին կերած պտուղին պատճառաւ ալ ամբողջ մարդկութիւնը մեղաւոր կը ծնի եւ ամենէն զարմանալին ո՞րն է, գիտէ՞ք, Գահիրէի մէջ այդ մեղքը սրբելու համար — որ կ'երեւի շատ ծանր տեսակէն ըլլալու է — ծանր ալ սակացոյց մը հաստատած են եւ առանց այդ վճարք ընելու ո՛չ մեղքը գործելու միջոցները կը դիւրացնեն եւ ո՛չ ալ մեղքէն ծնած երեխաները կը սրբեն — մկրտութեամբ — :

Ասոնք արգարութիւն են որ գրեթէ նախախնամութեան անունով կը գործուին :

Ադամ . . . պտուղ է կերեր, մեզի ի՞նչ որ անոր կերած պտուղին փարաները իրենց տկուսներովը վճարելու պարտաւոր ըլլանք . . . :

—Եթէ այդպէս է ուրեմն մեր բարեկամին երկրաշարժի մասին ցոյց տուած պատճառները պէտք է որ ընդունինք եւ անոր համակարծիք ըլլանք : Ինչո՞ւ :

Ամիսներէ ի վեր էր որ վարժարանի մասին եղած բողոքները անյսելի կը մնային ազգային վարչութեան կողմէ. անցեալ օր, երկրաշարժէն վերջ, Փոխ-Տեղապահը սկսած է փողոցները չափ-չփիլ մէկը միւսը համոզելու համար թէ ժողովականները եւ ինք որոշած են որ եթէ վարժարանի միակ հոգաբարձուն, որոյ պաշտօնավարութեան պայմանաժամը լրացած է «Լստ եգիպտատական Սահմանադրութեան», եթէ իր հրաժարականը չ'տայ, ինք անձամբ պիտի երթայ ստիպելով համար, որ հոգաբարձուն հրաժարի . . . չէ՞ք հաւատար որ ասիկայ երկրաշարժին արդունքը եղած ըլլայ . . . :

—Այո՛, իրաւունք ունիք, Փոխ-Տեղապահը ճիշդ նոյն բանը ըսած է Կ. Գ.ին ալ, որուն շատ մը բողոքները անյսելի մնացած էին մինչեւ հիմա . . . :

—Լաւ ուրեմն, ի՞նչ կ'ըսէք, Աստուած մի արասցէ, եթէ ուրիշ շարժ մ'ալ ըլլայ, ես կը հաւատամ թէ՛ ծնողներն ալ իրենց խոր քունէն պիտի արթնան, անգամ մը աչքէ անցնելու համար թէ՛ ի՞նչ կը գտնայ Առաջնորդարանի, վարժարանի եկեղեցոյ, եւ հանգուցեալ Կ. Գալստեանի կտակին մէջ :
Սղագրեց ԿԱՅՄԱԿ

ՃԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԿ 9 ՄԱՐՏ 1900

638	7490	5217	3091	1649	8978
322	1504	9168	3051	7538	895
8274	4495	4205	6039	5512	7132
3025	4853	7320	1802	8768	857
	9457	966	8584		

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԱյրիՏիկին Գ. Պէրպէրեան, Տիար և Տիկին Յարութիւն Պէրպէրեան, Լեոն Պէրպէրեան, Պետրոս Պէրպէրեան, Տիար և Տիկին Պուլաքեան, Օր. Բէրուզ Պէրպէրեան, Հրանտ Ալատին, Վահրամ Ալատին, Այրի Տիկին Կոտանեան, Միհրան Կոտանեան, Տիգրան Կոտանեան, Այրի Տիկին Համամեան, Տիար և Տիկին Մաղլուճեան «Արշալոյս»-ի միջոցաւ կը փութան իրենց շնորհակալիքը յայտնել ամեն սղգականաց և բարեկամաց, որոնք փութացած էին երէկ ներկայ գտնուիլ

ՏԻԱՐ ԳԱՌՆԵԿ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ

յուզարկաւորութեան տխուր հանդիսին և իրենց ցաւակցական ու համակրական անկեղծ զգայուններն արտայայտել հանգուցելոյն կողակցին, եղբօր, զաւակայ, եղբօրորդուոց և մտաւոր ազգականաց :

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր

Տօրաբէշ, 5 Մարտ

Չօրավար Պրապան կատարեալ յաղթանակ մը տարաւ Պօէրնեբուն վրայ. այս վերջինք՝ գաղթային զօրագունքերէն հալածուելով փախուստի ճամբան ձեռք առին :

Սթէրքսթրօմ, 5 Մարտ

Չօրավար Կաթագր Սթօրմպէրկ մտած է առանց ո եւ է ընդդիմութեան հանդիպելու :

Օսֆօնթէյն, 5 Մարտ

Չօրավար Յրէնչի Յրետազօրը, դետոյն հիւսիսայէն կողմէն ուժակոծեց թշնամեոյն դիրքին ալ կողերը՝ որ 8 մլոն տարածութեան վրայ կը գտնուէ : Այս դիրքը շատ նպաստաւոր է Բրիտանական շարժմանց, որովհետեւ հոն առատօրէն շէր կը գտնուի :

Լոնտրա, 6 Մարտ

Մէֆթինկին օգնելու համար կարեւոր ուժ մը Բէմպրէյ մեկնեցաւ :

— Չօրավար Պուլլըրի տեղեկագրին նայելով, նախալը բուրյովին պարպուած է թշնամեոյն կողմէ :

— Լէյտսմիթ հի մէջ Քիէյրը թիժօյի 800 դէպքեր պատահած են :

Գափ, 6 Մարտ

Պօէրնեբը ուժեղ ընդդիմութիւն մը ընելէ վերջ Տօրաբէշը թողլով հեռացան : Անդդիական գունդերը 30 մարդ կորսնցուցին :

Բարրապետի, 6 Մարտ
Լորտ Թոպրըթս Օսթոնթայնի շրջակա-
ները բանակեցաւ:

Պօէրները անկէ ոչ այնչափ հեռու հա-
մախմբուած են:

Քէլթաուն, 6 Մարտ
Բրիսքաի և Քէնարթի գաւառակները
Օրանթի անկախ պետութեան մաս հռչա-
կուած են. գրեթէ բոլոր Հոլանտացի ազ-
գաբնակութիւնը բացորձակ ապստամբու-
թեան դիմած է: Շարժումը կը տարածուի
Վիքթորիա Ուէսթէն Պրայմարի և ուրիշ
գաւառակներ, ապստամբները թիւը 3000ի
կը հասնի:

Լոնարա, 7 Մարտ
Լորտ Թոպրըթս Օսթոնթայնէն այս ցե-
րեկ կը հեռագրէ թէ՛ երեք զօրաբաժին
զրկած է Պօէրներուն դէմ, որոնք հեծե-
լագունդին կողմնակի շարժումին հետեանք
դէպ ի Հիւսիս քշուած են:

Զօրավար Պուլլըր վերջին զինուորական
գործողութեանց միջոցին 1859 մարդու կո-
րուստ ունեցած է, մեռած, վիրաւորուած
և անյայտացած:

Բրէթորիա, 8 Մարտ
Վիճակային դիւանին կողմէ հրատա-
րակուած լուր մը կը ծանուցանէ թէ Պօէր-
ները երբէք յուսահատած չեն և լստա-
հութեամբ յաջող ելքի մը կ'սպասեն:

Փարիզ, 8 Մարտ
Այսօր կէս օրին սոսկալի հրգեհ մը
հիմնայատակ ըրաւ « Գոմէտի Պրանսէզ » ի
թատրոնը:

Իմբին պատկանող գերասանուհի մը,
Օր. Ժանն Հանրիօթ իւր սենեկին մէջ ած-
խացած գտնուեցաւ:

Հնութեանց, արուեստից և գրական-
ութեան վերաբերեալ մաս մը իրենցներ
ազատուեցան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՒՏՏՐԻԱ. — Վաւորիական լրագիր-
ները կը նկատեն թէ՛ պէտք է Հարա-Ափ-
րիկեան ուրիշ նորանոր լուրերու սպասել,
Պօէրներու կացութիւնը յուսահատական է
ըսելու համար: Տեղի Չայրուկի բուռն լեզ-
ուաւ կը մեղադրէ Անգլիացիները եւ մաս-
նաւորապէս Թոպրըթս եւ Քիչնէր զօրավար-
ները, որ մերժած են՝ մեռեալները թա-
ղելու համար Զօրավար Քրօնթի խնդրած
պայմանաժամը չնորհել:

Վիեննէր Թակեպար կ'ըսէ,
Եւրոպայի մէջ հանրային կարծիքը այն
է թէ, որ և է պարագայի մէջ պէտք չէ
թողնուած լինի ամեն անոնց, որոնք
կուզեն Հարա-Ափրիկեան երկու Հասարա-
կապետութեանց անկախութեանը դպչիլ:
Առ այս՝ բոլոր Եւրոպական ժողովուրդները
միաբան են:

ԻՏԱԼԻՈՅ ԼՐԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ. —
Անգլիոյ կուսակից քանի մը նախարարական
լրագիրներու լեզուն կ'սկսի որոշ հակազդե-
ցութիւն մը առաջ բերել:

Մարթինո լրագիրը այս նկատմամբ
Անգլիոյ դէմ վերջին ծայր յարձակողական
յօդուած մը կը հրատարակէ, յիշատակեալ
պայմանաժամին համար, որուն մէջ կը բա-
րեմտեղ իրենք որ Զօրավար Քրօնթ, իրեն
քաջ զինուորները եւ մանաւանդ բոլոր Պօ-
էրները՝ որոնք — բոլոր աշխարհի սքանչաղ-
ման արժանացան — յաղթական դուրս ելլեն
այս դժնդակ փորձանքէն:

Ամենուն համար ալ բարիք մը պիտի ըլլայ
այս կ'ըսէ, երբ Անգլիան յաղթուի Օգոստոսի 5
միջի համար երբ Բրիտանական հպարտութիւնը
խոնարհի: Թէեւ Իտալիոյ մէջ շատերը կը կրկնեն
թէ՛ պարտաւոր ենք մեր շահուն համար մաղթել
որ Անգլիան յաղթանակէ, սակայն խնդրութիւն
մ'է այս, որ ո'չ միայն կը վիրաւորէ հասարակաց
զգացումը, այլ բացարձակապէս չ'համապատաս-
խաներ մեր իրաւացի շահերուն: Ինչքան որ
փորձառութեամբ գիտենք:

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԱՅԻ ԿԱԼԱՆԱԻՈՐԱՅ ԱՊՏԱՍՄԲՈՒԹԻՒՆԸ
Ծանրակշիռ ապստամբութիւն մը տեղի
ունեցած է Թուրքի զգաստարանին մէջ,
հետեւեալ պարագաներու տակ:

Շարքի երեկոյ եօթնասուն բանտար-
կեալներ մերժած են աշխատիլ, իրենց ար-
գելանոցներուն մէջ փակուելով:

Արգելանոցներու Տնօրէն Գոլէս փաշա,
որ այդ օրը Աղէքսանդրիա կը գտնուէր,
այս միջադէպի մասին տեղեկութիւն ստա-
նալով, կիրակի առաւօտ փութացած է ի
թուրա և ազգարարել տուած ապստամբ-
ներուն թէ՛ ամենախիստ պատժոյ պիտի են-
թարկուին, եթէ անմիջապէս չ'հնազանդին.
յարելով միանգամայն թէ իրենց գան-
գատները նկատողութեան պիտի առնուին,
իրենց մէջ կարգապահութիւնը վերահաս-
տատուելէ յետոյ:

Գոլէս փաշա առանձին առանձին կա-

լանաւորները յանուանէ կանչել տուած և
իւրաքանչիւրին հնազանդութիւն պատուի-
րած է, բայց անոնք պատասխանած չեն:

Կալանաւորներու Գեր-Տնօրէնն ևս՝ որ
միջամտած է խաղաղութիւնը հաստատելու
համար, սակայն ապարդիւն եղած է:

Երբ Գոլէս փաշա միջօրէէն յետոյ հոն
վերադարձած է, այս անգամ զարմանօք
դիտած է որ Թուրքի հինգ հարիւր բան-
տարկեալները միանգամայն ապստամբած
էին, բայց բարեբաղդաբար անոնք փակ-
ուած էին իրենց մենախոցերուն մէջ:

Ամէնքը միաբերան կը մերժէին իրենց
նախաճաշը առնել, եթէ իրենց ապստամբ
ընկերներուն սովորական օրապահիկն տալ
չ'ընդունուէր:

Այս պահուն Գոլէս փաշա վճռած է
խստութեամբ վարուիլ և քանի մը Սոսան-
ցի զինուորներ կեցուցած է ապստամբնե-
րու գտնուած վայրին դիմաց բարձր տեղ-
ւոյ մը վրայ, որոնք սովորական ազգարա-
րութիւնը ըրած են, հակառակ պարագա-
յին զիրենք հրացանի բռնել սպառնալով:

Բանտարկեալները նախատած են զին-
ւորներն, ասպարէզ կարգալով անոնց կըր-
ցածնին ընելու, սրով զինուորներն ստիպ-
ուած են առաջին անգամ՝ ապստամբներու
պարագլուխը նկատուածին վրայ բանալ
իրենց հրացանները:

Թէև այս անձը վիրաւորուած է, բայց
միւսները անդրդուելի մնացած են իրենց
որոշման մէջ, մինչև որ շատ մը անգամներ
զգուշաւոր հրացանաձգութիւններ տեղի
ունեցած են և անաստուղներէն վեց հատը
վիրաւորուած. այն ատեն միայն մնացեալ-
ները հնազանդութիւն յայտնած են և ան-
միջապէս բռնուելով խիստ հսկողութեան
տակ առաջնորդուած են մութ լնտաններու
մէջ:

Վիրաւորեալներէն երեք մարդասպա-
նութեան յանցանքով մշտնջենական աշխա-
տութեան, իսկ երկուքը ժամանակաւոր գա-
տապարտուածներ են եղել:

Վիրաւորեալներէն երկուքը միևնոյն
օրը մեռած են:

Բարեկարգութիւնը կատարելապէս հաս-
տատուած չէ տակաւին և հարցաքննութիւն
մը բացուած է այս ապստամբութեան պատ-
ճառները երևան բերելու համար:

ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ. — Ժօրթ Ապտալ-
լահ անունով Սիրիացի խոհարար մը երեք-
շաբթի օր սպաննուած է Գամբաի մէջ, Ես-

ԼԱ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՅ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԱՅԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ

ԵՐԱՇԱԽՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ ՄԻԼԻԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահա-
բաժինները:
Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամի նպաստ
իրենց գումարած է 3 ՄԻԼԻՈՆ 480 ՄԻԼԻՈՆ որ գրեթէ
աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէջ միլիար աւելի է:
Ս. ԼԷՈՒՍՐ Ընդհանուր ներկայացուցիչ ի Գահիրէ:

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ընկերութեան
աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւն-
ներ և հրապարակի վրայ աւելի ապահովագրութիւններ
ունի և աւելի ապահովագրի կը գանձէ:
ԱԼԷՔՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործ. յ'Աղէքսանդրիա:

գրւած Հաննա անուն խաղաղ մը որ երկար ատենէ ի վեր Ապտալլահի կնոջ հետ մեղապարտ յարաբերութեան մէջ կը գտնուի եղբր:

Ոստիկանութիւնը չորեքշաբթի օրը կէս օրին ոսպանելոյն գիակը գտած է ցորենի արտի մը մէջ:

Էօզպէքի պահականոցը անմիջապէս զեկուցանելով եգիպտական միւս բոլոր պահականոցներուն, հրահանգ տուած է որպէս զի ձերբակալեն Ապտալլահի կինն՝ ինչպէս նաև մարդասպանը:

Մարդասպանը կիզէի ոստիկանութեան միջոցաւ ձերբակալուելով, Գահիրէի կառավարիչ Մահէր փաշայի կողմէ հարցաքննութեան ենթարկուած է և այս քննութենէն հաստատուած է որ Եագուպ Հաննա սպանելոյն կնոջ հետ համախորհուրդ երեքշաբթի առաւօտ սպաննելով խեղճ (!) խոհարարը, դիակը նետած է հոն, ուր տեղէն ոստիկանութեան պաշտօնեայք գտան:

ԵՐԿՐԱՇԱՐԺ. — Երեքշաբթի օրը կէս օրէն յետոյ երկրաշարժի երկու ցնցումներ տեղի ունեցան. մին ժամը 3ին ատենները որ շատ թեթեւ էր, իսկ միւսը ժամը 8ը 10 անցած որ վայրկեանի մը չափ գրեթէ տեղի:

Վերջին ցնցումը մասնաւորապէս Պոնլաքի և Նեկկալայի կողմերը շատ ուժգին եղած է:

Կ'ըսեն թէ շատ մը արկածներ տեղի ունեցած են Գահիրէի հին թաղերուն մէջ:

ՄԱՍՆԱԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԴԻՏԱՆՈՅԷՆ

Դիտանոցը կը հաստատէ որ երկրաշարժի ցնցումը երկու վայրկեանի չափ տեւած է և յետոյ շարժացոյցի (sismographe) ասեղը դէպի Արևելք երեք ու կէս երկրվայրկեանի չափ կանգ առած է:

— Երկու ցնցում տեղի ունեցած է մին 8ը 41 և միւսը 8ը 43 անցած:

Ըստ դիտանոցին՝ երրորդ ցնցում մը տեղի ունեցած է ժամը 9ը 22 անցած, բայց շատ անզգայի եղած է:


Այս իւրաքանչիւր շարժերը երկու երկրվայրկեան շարժացոյցի ասեղը կտանցուցած են և նախորդ շարժերու միջոցը նշանակելէ վերջ ամբողջովին կանգ առած են:

Ոմանք կ'ենթադրեն թէ այդ շարժերը յառաջ կուգան Նեղոսէն ուղղուած մակերեսներու կապճուտ մասերուն տեղափոխութիւններէն:

ԳԻՐԲ ՈՒՁՈՂՆԵՐՈՒՆ

Գահիրէի և չընկալից գրասէր Հայ հասարակութեան դիւրութիւն մը տալու մտք՝ կը ծանուցուի թէ Հայերէն ամեն գիրք, (Դասական, Դպրոցական, Գիտական, Գրական, Առուեսական, Բանասիրական, Վիպական եւ այլն) որ հրատարակուած են և կը հրատարակուին Պոլիս, Իզմիր, Երուսաղէմ, Թիֆլիզ, Վենետիկ ու Վիեննա, կարելի է դիւրամատչելի պայմաններով ձեռք բերել՝ դիմելով Տիար Կ. Նաւասարգեանի, Գալստեան վարժարան հայոց ի Գահիրէ:

Վ. Ա. ՃԱՍՌԱՏՈՒՆ ԹԷՅԻ
Գ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ ԸՆԿ
ՇՈՐԷ-ԱՊՏԻԿ-ԱՋԻՉ



Թէյի գործածութեան ընդհանրանալով, թէյի ճաշակն ևս նրբացած է. որով թէյի առևտուրն վաճառականութենէ աւելի արուեստ մըն է որ միայն երկարատև և ճոխ առևտուրէ յառաջ եկած փորձառջութեամբ կ'ստացուի:

Մեր տունն, որ արդէն հայրածանօթ է իր քսանամեայ գոյութեամբ և ընդարձակ գործառնութեամբ, այս տարի ևս իր մասնաւոր գործակալաց ձեռամբ դնած է բազմազան և մեծաքանակ ընտիր թէյեր 2ԻՆՍՏԱՆԻ, ՃԱՎԱՅԻ, ՍԷՅԼԱՆԻ և ՀՆԴԿԱՍՏԱՆԻ գլխաւոր արտադրիչներէն, որոցմէ արդէն հասած է մեզ. ինչպէս նաև ճըմեռուան եղանակի յարմար թէյեր, որոնք իրենց գերնախի հասաւտութեամբ ամեն ճաշակի յարմար ըլլալով հանդերձ, դնուող 2ԱՓԱՋԱՆՑ աժանութեամբ ալ ամեն քսակի դիւրամատչելի են:

Թէ Կ. Պոլսոյ և գաւառացի թէ օտար երկիրներու մէջ մեր տան ցոյց տրուած վազահովիտն կը քաջալերէ մեզ, առաւել ևս յարիւր մեր սկզբունքին, որ է՝

Ռեզիտանսիոն Թէյերու օնակի կալիքի եւ գնաց մասին:

Մեծաքանակ թէ փոքրաքանակ մեզի եղած ԿԱՆԻՍԻՅԱ դրամով յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

ՏՅՈՒՄՅՈՐ ԺՈՐժ Փ. ԷՎԼԻԵԱՆ

Ամերիկեան Առաւմարոյժ Ապօին Շարժ Քուպրի Թիգ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ ակուաներ:

Կը դադրեցնէ վայրկեանապէս ակուայի ցաւերը, ամերիկեան նորագոյն մեթօտով իւր պատրաստած գեղերովը:

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած ակուաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երձիշաւորէ:

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում, ամէն օր կէսօրէ ետք ժամը 4—5:

Տպագրուիւն Ա. Ա. ԴԱՐԲԻՆԵԱՆ

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՓՈՒՌ
ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ

Օռօցի Պափ վաճառատան մօտերը, Կամե-էյ-Պենաքի 6իւս դիմացը

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. բազմաթիւ նորանոր յաճախորդներէ գտած ընդունելութիւնը ներքէն քաջալերուած, պատիւ ունին յայտարարելու թէ՛ իրենց փութին մէջ պատրաստուած ընտիր հացերը զուտ և անխաղճ գալս ալուրէ պիտի ըլլան միշտ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան փութին մէջ գաղղիական, անգղիական, գերմանական և յունական հացեր պիտի պատրաստուին, իրենց տեսակին մէջ անմրցելի ըլլալու պայմանաւ:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. ամենամեծ խնամքով պիտի պատրաստեն սուրճի, թէյի և կաթի պաքսիմաթներ և այլն:

ԵԿԱՒՕՑ ԵՒ ԸՆԿ. թեան եղած յանձնարարութիւնը ամենայն ճշգրտութեամբ և փութով կը կատարուին: 36—50

ԿՈՊԷՌ ՊԷՆԼԵԱՆ

ՆՈՐ ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ԵՒ ՆԿԱՐՁԱՏՈՒՆ

Տաներկու տարիներ շարունակ կարեւոր լուսանկարչատուններու մէջ աշխատելով, արհեստին ամեն ճիւղերը լաւ մշակած և փորձառութեան ստացած է:

Պոլսոյ մէջ Ապտալլահ եղբայր տան, ինչպէս և ուրիշ մի քանի ծանօթ տուններու, քաղաքիս մէջ վերջին անգամ Լէքէհան գործատան մէջ ամենապարկեւոր պաշտօնը վարած, այժմ առանձին գործատեղի՝ Կը հիմնէ Եգիպտոսի Շարխ Գամիլ Օթիլ ՇէֆէրՏՍԻ ձիւղ գիմաց թիւ 3 արարթումանին երրորդ յարկը, ուր կը պատրաստէ լուսանկարներ, ինչպէս և գուրքը կուլիներ ի հարկին Ակրանիսիւման քնական մեծութեամբ:

Կենդանախիւրներ ամերիկեան մեքենայով, ուրոնք երբէք չեն աւրուիր:

Գունաւոր լուսանկարներ ամեն մեծութեամբ քնական գոյներով միմեմբիւր:

Իւզաներկ և ջրաներկ պատկերներ, Կը լինի Լուսանկարի և պատկերահանութեան վերաբերեալ յանձնարարութիւններ կ'ընդունի ուրու, սեվիթթրման եւլն:

Իրեն զիմով յաճախորդներն հանել անուած լուսանկարներուն հետ միեւնոյնէն գունաւոր մը նուէր պիտի ստանան, որ նորութիւն մ'է:

Դիմեցէ՛ք և կատարելապէս գոհ պիտի մնաք:

ՓԱՓԿԱԿԵՐԱՑ ԱԶԲԸ ԼՈՅՍ

ԼՕՐԱՆՓԱԶԻ ՕՆՆԵԻՊ

Որ Կ. Պոլսոյ Բերայի Հալիպ Չարքաիին մէջ ընտիր խմորեղէններ պատրաստելով հոչակ հանած է, այս անգամ Ապտալլահի Պահականոցին դիմացի անկիւնը խնութ բացած է և կը պատրաստէ տեսակ տեսակ համամալ քաղցրաւէնիք, խմորեղէնք ամենամաքուր և ընտիր իւղով:

Հոն զիմով յաճախորդներէ իւրաքանչիւրը իրենց ճաշակին համեմատ գոհացում պիտի գտնեն:

Հարսանիքներու, երեկոյթներու և հրաւերներու համար պէտք եղած անուշեղէն—խմորեղէնները կը պատրաստէ գոհացնելու պայմանաւ և դիւրամատչելի գներով: